

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՖԻՐՄԱ ԿՈՌԻՆԿ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀՐԱԲԽԱՅԻՆ ՏՈՒՖԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԲԱՅԱՀԱՆՔԻՑ ՕԳՏԱԿԱՐ
ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ
/ընդերքօգտագործման իրավունք թիվ 053/

«ՖԻՐՄԱ ԿՈՌԻՆԿ» ՍՊԸ

տնօրեն՝



Լ. Սարիբեկյան

Երևան 2018

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

2012թ.-ին Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին նոր օրենսգրքի ընդունմամբ հիմք դրվեց մի շարք նոր ընթացակարգերի, որոնց թվին պատկանում է նաև երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում բնության և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի կազմումը:

Շրջակա միջավայրի համար կայուն/անվտանգ և սոցիալապես ընդունելի նախնական գնահատման հայտը պետք է անդրադառնա բնապահպանական բոլոր ասպեկտներին և պետք է կազմվի ՀՀ բնապահպանական բնագավառի իրավական ակտերով սահմանված պահանջների և նորմերի հաշվառմամբ: Այդպիսի նորմատիվ պահանջներ ներկայացված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն որոշում, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:

- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 26.05.2006թ.-ի թիվ 750-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան` դրանց հետագա օգտագործման ժամանակ:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը**

ՀՀ Շիրակի մարզի Արթիկի հրաբխային խարամների հանքավայրի Հարավային տեղամասի «Ֆիրմա Կռունկ» ՍՊ ընկերությանը թիվ 053 ընդերքօգտագործման իրավունքով տրամադրված ընդլայնվող բացահանքից նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում:

Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասը գրավում է մոտ 22կմ² տարածք և սահմանափակվում է արևելքից Աղթիբուջաղի լեռնաշղթայի անդեզիտադաշտներով, հարավից՝ Պեմզաշենը Մարալիկին միացնող երկաթգծով, արևմուտքից՝ Ձորակապ գյուղի մոտ ձորակով:

Տեղամասի ապարների լիթոլոգիական կտրվածքում մասնակցում են ստորին, միջին և վերին անթրոպոգենային հասակի ապարներ, որոնք ներկայացված են անդեզիտադաշտներով, հրաբխային խարամներով, անդեզիտաբազալտներով, կավերով, հրաբխային տուֆերով և ժամանակակից նստվածքներով:

Հրաբխային տուֆերը, ներկայացված են հիմնականում արթիկյան տիպով, որոնք տեղ-տեղ հաստաշերտի ներքին մասերում, անցնում են դաշիտանման տուֆերի: Տուֆերի հանքամարմինը շերտաձև է, հաստաշերտի համարյա հորիզոնական տեղադրումով և գրավում է մոտ 12 կմ² մակերես:

Հզորությունը տատանվում է հիմնականում 7-ից 10մ-ի սահմաններում, միջինը կազմում է 8.0մ: Սակայն կան տեղեր, որտեղ տուֆերի հզորությունը հասնում է մինչև 24մ:

Տուֆային հանքակուտակը տեղամասում հիմնականում միաձույլ է, բացառությամբ վերի «փուշտայի» մասը, որի հզորությունը տատանվում է 0.3 –ից 2.0մ –ի սահմաններում: Այստեղ մեծ տարածում ունեն, այսպես կոչված «կարմիր ծածկի» տուֆերը 0.5-ից 2.5 մ հզորությամբ:

Տեղամասի արևմտյան և հյուսիս - արևմտյան մասում բացված են Երևան – լենինականյան տիպի տուֆեր 6-ից 12մ, միջինը 7.6մ հզորությամբ:

Տեղամասի տուֆերն իրենց որակական հատկություններով, համապատասխանում են «*Аёіёё ёç ãîðíó ïðîä äëÿ îðîçãîäñðäá îáëëõîâî-íúð, àððëòáëòóðîí-ñòðîëèðáëüíúð, îâîðèàèëüíúð è äðóäëð èçãáëëñ*» 9479-98 ГОСТ-ի և

«Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍՍ-ի պահանջներին և կարող են օգտագործվել ինչպես երեսպատման, այնպես էլ շինարարական քարերի արդյունահանման նպատակով:

Տուֆերի ֆիզիկամեխանիկական ցուցանիշների փոփոխման սահմանները և միջին տվյալները բերվում են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

NN	Ցուցանիշը	Արթիկյան տիպ	Դացիտանման տուֆեր
1.	Իրական խտությունը	2,63 գ/սմ ³	2,68 գ/սմ ³
2.	Ծավալային զանգվածը	1558 կգ/մ ³	1958 կգ/մ ³
3.	Ծակոտկենությունը	40,2 %	27,3 %
4.	Ջրակլանելիությունը	15,4 %	8,3 %
5.	Ամրության սահմանը	կգ/սմ ²	կգ/սմ ²
	ա) չոր վիճակում	173	263
	բ) ջրահագեցած վիճակում	144	232
6.	Փափկեցման գործակիցը	0,82	0,88
7.	Ցրտադիմացկունության գործակիցը	0,86	0,89

Տեղամասի արթիկյան տուֆերը ունեն հիմնականում մանուշակավարդագույն (արևելյան մաս) և վարդագույն գորշ գույն (արևմտյան մաս): Դացիտանմանները ունեն մուգ վարդագույն, գորշ կարմիր և գորշ գույններ:

Արթիկյան տուֆերի քիմիական կազմը հետևյալն է՝

SiO ₂ - 64.24 – 67.16%	MgO - 1.05 – 1.85 %
TiO ₂ - 0.43 – 1.00%	Fe ₂ O ₃ - 3.99 – 4.99 %
K ₂ O - 2.25 – 2.32 %	Al ₂ O ₃ - 16.58 – 17.49 %
SO ₃ - 0.8 – 2.31 %	CaO - 3.78 – 4.20%
խոնավություն – 0.02 – 0.22%	nnn - 0.32 – 1.72 %

Հարավային տեղամասի արթիկյան տուֆերի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից 20.02.1974թ.-ի N7111 արձանագրությամբ հետևյալ կարգերով և քանակներով. A 18263.0, B 9124.6, C₁ 46122.9, A + B + C₁ 73510.5 հազ.մ³: Երեսպատման բլոկների էլքը կազմում է 34.4%, ուղեկից հանվող պատքարի էլքը՝ 3.1-3.5%: Դացիտային տուֆերի պաշարները ըստ C₁ կարգի կազմում են 6884.4 հազ.մ³:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

«Ֆիրմա Կոունկ» ՍՊ ընկերությունը Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի (XXXV1-C₁ և XXXIV-A բլոկ) բացահանքի տարեկան արտադրողականությունը նախատեսում է շուրջ 10,0հազ.մ³: Հանքի ծառայման ժամկետը կազմում է մինչև 35 տարի:

Տուֆերի արդյունահանումը նախատեսվում է կատարել շուրջ տարի: Հանքարդյունահանման աշխատանքները կատարվելու են մեկ հերթափոխ, 8 ժամ աշխատանքային ռեժիմով: Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – միջինը 435մ,
- առավելագույն լայնությունը – միջինը 330մ,
- ամենամեծ խորությունը – մինչև 7մ,
- օտարման մակերեսը- շուրջ 7,8հա:

Տուֆերի արդյունահանումը նախատեսվում է կատարել ցածրաստիճան, միակողմանի ընդերկայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով՝ մակաբացման ապարները և ընդերքօգտագործման թափոնները ներքին /նախկինում մշակված տարածքներ/ լցակույտ տեղափոխելով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

- աշխատանքային աստիճանի բարձրությունը – 0.42մ,
- աստիճանի բարձրությունը մարելուց հետո – 0.42մ,
- աստիճանի թեքման անկյունը – 90°,
- հանութային տեղամասի երկարությունը – 260մ,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20մ,
- բացահանքի կողի թեքման անկյունը – 22-25°:

Քարի արդյունահանումն իրականացվելու է CMP-026 մակնիշի քարհատ մեքենայով:

Լցակույտառաջացումը կկատարվի բուլդոզերային եղանակով:

Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել բացահանքի տարածքի ռեկուլտիվացիա:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

«Ֆիրմա Կոունկ» ՍՊԸ կողմից նախատեսվում է իրականացնել թիվ 053 ընդերքօգտագործման իրավունքի շրջանակներում գործող բացահանքի ընդլայնում: Ընդերքօգտագործման նպատակով Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասից հայցվող տարածքը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքից մոտ 4կմ հարավ-հարավ-արևմուտք, Պեմգաշենից մոտ 1.8կմ հյուսիս-արևմուտք, Տուֆաշենից մոտ 2կմ արևելք (նկար 1, 2): Հայցվող տարածքը վարչատարածքային բաժանման տեսակետից ներառված է Տուֆաշեն համայնքում:

Ընդհանուր առմամբ, ՀՀ Շիրակի մարզը բնութագրվում է զարգացած ենթակառուցվածքներով: Մարզով անցնում են 114.0 կմ միջպետական, 431.6 կմ հանրապետական և 283.4 կմ տեղական (որից 226.3 կմ մարզային ու 57.1կմ համայնքային ենթակայության) ճանապարհներ: Բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային և օդային տրանսպորտով: Մարզում գործում է «Շիրակ» օդանավակայանը, որն ապահովում է օդային կապը ԱՊՀ երկրների հետ և հնարավորություն ունի ընդունել ցանկացած տեսակի ինքնաթիռ:

Շիրակի մարզով անցնում է «Գյումրի-Թուրքիայի Հանրապետության սահման» 13.0կմ, «Գյումրի-Մարալիկ» 38.0կմ, «Ղալթաղչի-Անի» 84.0կմ երկաթգիծ:

Մարզում ջրամատակարարումն իրականացվում են «Շիրակջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 39, «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից 31 և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից 53 բնակավայրերում:

Մարզի համայնքների էլեկտրամատակարարումն իրականացվում է համապետական ցանցից: «Առէներջի» ՍՊԸ-ն ավարտել է Շիրակի մարզի Քարախաչ լեռնանցքի հողմաէներգետիկ ծրագրի մոնիթորինգային աշխատանքները: Նախատեսվում է ներդրում կատարել մինչև 20 ՄՎտ գումարային դրվածքային հզորությամբ «Քարախաչ 1» հողմաէլեկտրակայանի կառուցման նպատակով՝ հետագայում հասցնելով այն մինչև 90 ՄՎտ: Ներկայումս Շիրակի մազում գործում են 5600կՎտ տեղակայված հզորությամբ և 14.63մլն կՎտժ տարեկան գումարային արտադրանքով փոքր ՀԷԿ-եր: Նախատեսվում է կառուցել 8779կՎտ տեղակայված գումարային հզորությամբ և 27.2մլն կՎտժ տարեկան գումարային արտադրանքով չորս փոքր ՀԷԿ-եր:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ SHIRAK MARZ


Մարզկենտրոնը ԳՅՈՒՄՐԻ
3 քաղաք, 129 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 563կմ



GYUMRI the center
3 cities 129 settlements
Instate roads 563km

Արթիկի տուֆերի
հանքավայրի
Հարավային տեղամաս

Նկար 1.



Հատված 1:50000 մասշտաբի տոպոգրաֆիական քարտեզից

Նկար 2.

▪ **Ռելիեֆ, երկրաձևաբանություն**

Երկրաձևաբանական տեսակետից Արթիկի տուֆերի հանքավայրի տարածաշրջանը զբաղեցնում է Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան և Շարայի լեռան հարավ-արևմտյան լանջերը՝ Շիրակի դաշտի հարավ-արևելյան մասը:

Տարածաշրջանի գեոմորֆալագիական տարրերի ձևավորման գլխավոր գործոնը Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է: Այն առավելապես դրսևորվում է անդեզիտաբազալտային, անդեզիտադագիտային, տուֆոլավային հրաբխահոսքերով: Իր հովհարաձև տարածված լանջերի հետ միասին Արագածը զբաղում է մոտ 4000կմ² տարածություն Արարատյան ու Շիրակի դաշտերի, Ախուրյան ու Քասախ գետերի միջև: Երեք կողմից նրան հարևան են հյուսիսից՝ Շարայի, Արևելքից՝ Արայի, հարավ-արևմուտքից՝ Մեծ Արտենիի լեռները:

Արագած հրաբուխն ունի 400մ խորությամբ և 3կմ տրամագծով հսկա խառնարան, որի քայքայված պատերի մնացորդները կազմում են լեռան չորս կատարները: Խառնարանը հարավ-արևելյան կողմից բաց է և կապվում է շրջապատին: Կատարները դասավորված են կիսաշրջանաձև և կազմում են 270 աստիճանի աղեղ: Ամենաբարձրը հյուսիսային կատարն է (4090.1 մետր): Այնուհետև գալիս են արևմտյանը՝ 3995.3 մետր, արևելյանը՝ 3908.2 մ և հարավայինը՝ 3887.8 մ: Խառնարանը ջրահավաք մեծ ավազան է: Այստեղից է սկիզբ առնում Քասախի վտակ Գեղարոտ գետը:

Եթե Արագածի ատամնաձև գագաթները ուղղաձիգ են, (հատկապես հյուսիսային կատարը, որ բավական դժվարամատույց է վերելքի համար), ապա լանջերը մեղմ թեքություն ունեն, որոնք փոխված են գագաթների շուրջը հսկայական տարածությունների վրա՝ տեղ-տեղ կազմելով ընդարձակ բարձրավանդակներ, սարավանդներ, հարթություններ (Ապարանի դաշտը, Կարմրաշենի, Շամիրամի սարահարթերը, Օհանավանի, Մարալիկի սարավանդները և այլն), մասնատված են ճառագայթաձև տարածվող խոր հովիտներով, կիրճերով, հեղեղատներով: Լանջերին կան նաև հրաբխային ծագում ունեցող կոնաձև բարձրություններ (Փոքր Արտենի, Իրինդ, Կարմրաթառ, Դաշտաքար և այլն):

Արագածի մերձակայքում ցրված են բազմաթիվ պարազիտային կոներ, որոնք անցյալում պարբերաբար արտավիժել են հրաբխային նյութեր: Հրաբխային


ժայթքումների հետևանքով Արագածի լանջերը հսկայական տարածության վրա (ընդհուպ մինչև ստորին փեշերը) ծածկված են լավաներով:

Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի տարածքը ներկայացված է մեղմաթեք սարավանդով՝ կտրտված մշտական և ժամանակավոր ձորակներով, փոքր գոգավորություններով, բլրաթմբերով և այլն:

Տարածքը գտնվում է սեյսմիկ II գոտում, որի բնորոշ է 0,3-0,4g հորիզոնական արագացումներ և 8-9 բալ երկրաշարժի հնարավոր ուժգնություն:


Տարածքը սողանքավտանգ չէ, մոտակա սողանքային մարմինը գտնվում է հայցվող տեղամասից ավելի քան 4կմ հեռավորության վրա:

Տեղամասի տարածքի երկրաձևաբանական, լանջերի թեքության և սողանքավտանգ տեղամասերի տարածման սխեմատիկ քարտեզները ներկայացվում են ստորև նկար 3-5-ում:




Նկար 3.

ՏԱՐԱԾՔԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




Նկար 4.



Նկար 5.

▪ **Արթիկի տուֆերի հանքավայրի տարածաշրջանի կլիման** բարեխառն լեռնային է (նկար 6), ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով, օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը հասնում -30°C : Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաքթերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ, առավելագույն ջերմաստիճանը հասնում է $+30^{\circ}\text{C}$: Միջին ջերմաստիճանը հուլիս ամսին 16°C է: Տարեկան տեղումների քանակը կազմում է 500-550մմ, ձյան ծածկի հաստությունը՝ 61սմ, հողի սառեցման խորությունն հասնում է մինչև 110սմ, քամու միջին արագությունը 3.0-6.0մ/վրկ: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 2-ից 3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 140-ից 160 օրերի միջակայքում, որոշ տեղերում՝ 220 օր: Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են, սակայն ունեն կայուն մեկ ուղղություն, ինչի պատճառով կարող են լինել ձյան ոչ սովորական ձևահյուսեր:



Նկար 6.

▪ ***Մթնոլորտային օդ***

ՀՀ-ում օդի աղտոտման մակարդակն ուսումնասիրվում է Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Մոտակա դիտակայանը գտնվում է Գյումրի քաղաքում՝ ընդերքօգտագործման նպատակով հայցվող տեղամասից ավելի քան 25կմ հեռավորության վրա: Ընդլայնված Բացահանքի շահագործման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվության կազմման ընթացքում նախատեսվում է կատարել տեղամասի տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածության բազային ուսումնասիրություն, ինչը կդիտարկվի որպես «զրոյական» տարբերակ և հիմք կհանդիսանա հետագա բնապահպանական մոնիթորինգի համար:

▪ ***Ջրային ռեսուրսներ***

Արթիկի տուֆերի հանքավայրի շրջանի հիմնական ջրային միավորը Արթիկջուր գետն է: Արթիկջուր գետը, որի երկարությունը 26 կմ է: Այն սկիզբ է առնում Արագածի հյուսիս-արևմտյան լանջից՝ ծովի մակարդակից 3079.2 մ բարձրության վրա: Ջրհավաք մակերեսը 77.0 կմ² է, ավազանի միջին բարձրությունը 2350մ է, ունի հյուսիս-արևմտյան ուղղություն: Գետի ջրային ռեժիմին առանձնահատուկ են զարնանային վարարումները, անձրևային վարարումները, աշնանային ցածր մակարդակը, ամռան-աշնանային և ձմեռային ցածր մակարդակը: Գետավարարումների բարձրագույն կետը, որը համարյա միշտ համարվում է տարվա առավելագույնը, դիտարկվում է մայիս-հունիս ամիսներին: Սովորաբար վարարման ընդհանուր ալիքի վրա գումարվում են անձրևային ջրերի հորդացումները սուր պիկերի տեսքով՝ տալով նրան բարձրակատար տեսք: Արթիկջուր գետը սելավաբեր է, որի վտակների հունով հոսող սելավները շատ հաճախ մեծ ավերածությունների պատճառ են դառնում:

Արթիկջուր գետի ջրային ռեժիմը բնութագրվում է սահուն, երկարատև վարարումներով (ապրիլ-օգոստոս)՝ պայմանավորված ձյան և սառույցի հալոցքի սնմամբ: Սահուն ընթացքի վարարումն ու անկումը պայմանավորված է անձրևներով: Հոսքի համար անձրևային ջրերն ունեն փոքր նշանակություն, հիմնականում հոսքը

կազմավորվում է ձյան և սառույցի հալոցքների ջրերից: Ամբողջ դիտարկումների ժամանակ ջրի մակարդակի առավելագույնը կազմել է 178 սմ, իսկ տարվա համար՝ 130 սմ: Ջրի առավելագույն ծախսերը ձևավորվում են գարնանային ձնհալի ժամանակ, երբ վարարումների ամբողջ ալիքի վրա դասավորվում են անձրևային գետավարարումների կատարանման պիկերը: Արթիկջուր գետի վարարումները սկսվում են մայիսի սկզբին և վերջանում հունիսին: Առանձին տարիներին ամռանը լինում են ուշացած անձրևային վարարումներ, բայց դրանք նշանակալի պիկեր չեն առաջացնում: Սելավային հոսքերը իրենց ավազանում դուրս են բերում մեծ քանակությամբ քար, խիճ, ավազ, տիղմ և այլն: Բեկորային նյութի ծավալը մի քանի ժամվա ընթացքում կարող է հասնել տասնյակ հազարավոր խորանարդ մետրի:

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրին Հարավային տեղամասի տարածքին անմիջականորեն հարող տարածքներում մակերևութային ջրահոսքեր և ջրերի աղտոտվածության ուսումնասիրության դիտակայաններ չկան:


Հայցվող տեղամասում ստորգետնյա ջրերը բացակայում են: Ինչպես վկայում է Արթիկի տուֆերի հանքավայրի շահագործման շուրջ 60 տարվա փորձը, ոչ մի հետախուզական կամ շահագործական փորվածքում ստորգետնյա, գրունտային ջրերի ներհոսք չի գրանցվել: Մթնոլորտային տեղումները հեռացվում են տեղամասի տարածքից բնական նորոծման եղանակով:

▪ *Հողեր*

Արթիկի հանքավայրի շրջանի (այդ թվում՝ Հարավային տեղամասի) տարածքում տարածված են գերազանցապես սևահողերը, սակայն շրջանի հարավային մասերը գրեթե զուրկ են հողածածկույթից: Սևահողերի բնական ենթատիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 7-ում:

Տարածքի սևահողերում նկատվում է սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում: Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հազեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



- ① Սևահողեր լվացված հարուստ հումուսային փոքր հզորության կավավազային
- ② Սևահողեր լվացված միջին հումուսային միջին հզորության կավավազային
- ③ Սևահողեր լվացված միջին հումուսային փոքր հզորության կավային տեղ-տեղ թույլ հողմահարված
- ④ Սևահողեր լվացված քիչ հումուսային փոքր հզորության կավային մասամբ թույլ հողմահարված
- ⑤ Սևահողեր լվացված միջին հումուսային հզոր կավային մշակովի
- ⑥ Սևահողեր լվացված միջին հումուսային միջին հզորության հիմնականում կավային մշակովի
- ⑦ Սևահողեր լվացված քիչ հումուսային հզոր կավային մշակովի
- ⑧ Սևահողեր լվացված քիչ հումուսային միջին հզորության կավային մշակովի
- ⑨ Սևահողեր լվացված քիչ հումուսային փոքր հզորության մեծամասամբ կավային մշակովի
- ⑩ Սևահողեր սովորական ալրակարբոնատային քիչ հումուսային փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ⑪ Սևահողեր սովորական ալրակարբոնատային քիչ հումուսային հզոր կավային միջին հողմահարված մշակովի
- ⑫ Սևահողեր սովորական ալրակարբոնատային քիչ հումուսային միջին հզորության կավային մշակովի
- ⑬ Սևահողեր սովորական ալրակարբոնատային քիչ հումուսային փոքր հզորության կավային մշակովի
- ⑭ Արմատական ապարների ելքերի և ուժեղ քարքարոտ թերի զարգացած բնահողերի համալիր

Նկար 7.

Սովորական և լվացված սևահողերի քիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 2-ում:


Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնը և խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում
		հումուս	ընդհանուր		
			ազոտ	CaCO ₃	
Սովորական սևահողեր	A ₁ 0-23	6.67	0.34	չկա	32.2
	A ₂ 23-43	6.59	0.32	չկա	33.4
	B ₁ 43-68	5.32	0.31	չկա	37.3
	B ₂ 68-83	1.64	0.20	չկա	28.5
	C 83-100	0.90	0.19	40.3	-
Լվացված սևահողեր	A ₁ 0-15	4.32	0.34	0.5	37.2
	A ₂ 15-29	2.77	0.23	0.6	36.1
	B ₁ 29-45	2.56	0.18	0.6	29.2
	B ₂ 45-62	2.09	0.15	1.6	37.2
	C 62-80	1.99	0.15	1.7	24.8

A – հողի վերին, հումուսով առավել հարուստ շերտ, B - անցողիկ հորիզոն, C – մայրական ապարատեսակ

Ընդլայնվող տեղամասի մոտ 60% տարածքում առկա է 0.4մ առավելագույն հզորությամբ հողաբուսական շերտ:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Հանքավայրի շրջանը գտնվում է ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Բուսականությունը ներկայացված է լեռնային տափաստաններին բնորոշ տեսակներով, որոնք ձևավորվում է բարեխառն և չոր կլիմայի պայմաններում, զբաղեցնում է ընդարձակ մակերես՝ տարածվելով մարզի ցածրադիր շրջաններից մինչև 2300-2400մ բարձրությունները: Այն ունի հարուստ տեսակային կազմ: Տարածված են տարատեսակ խոտաբույսեր՝ փետրախոտ, սեզ, շյուղախոտ, կծմախոտ, թիթեռնածաղիկ, լոբազգիներ, ինչպես նաև օշինդր (յավշան) դաշտավլուկ, անթառամ և այլն: Փետրախոտային տափաստաններից մի փոքր ավելի բարձր տափաստանային բուսականության մի առանձին տիպ են կազմում հացազգատարախոտային բույսերը: Բուսականության տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 8-ում:



Նկար 8.



Agropyron cristatum



Stipa pennata

Հայցվող տեղամասի շրջանում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, բարձր լեռնային լայն տարածված կենդանական ձևերով: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դողդռների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ: Լայնորեն տարածված

կենդանատեսակներից այստեղ հանդիպում են. կաթնասուններից՝ նապաստակ (Lepus europaeus), աղվես (Vulpes vulpes), գայլ (Canis lupus) և մի շարք կրծողներ: Բուն տեղամասում կենդանական աշխարհի ներկայացուցիչներ բներ, բնադրավայրեր և այլն չկան, ինչը պայմանավորված է նրանով, որ Արթիկի տուֆերի հանքավայրի և դրա տեղամասերի տարածքում երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքները սկսվել են դեռևս անցյալ դարի 50-ական թվականներին և ակտիվորեն շարունակվում են մինչ օրս: Այստեղ ձևավորված ռելիեֆի՝ բացահանքեր, ճանապարհներ, լցակայաններ (նկար 9), և արդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայի, ինչպես նաև շրջանի խիստ բնակեցված լինելու հետևանքով ձևավորվել են անբարենպաստ պայմաններ վայրի կենդանիների համար:



Նկար 9.

▪ *Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ*

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի շրջանում չկան բնապահպանական տեսանկյունից խոցելի կամ բնության հատուկ պահպանվող տարածքներ: ՀՀ Շիրակի մարզում հայտնի միակ բնության հատուկ պահպանվող տարածքը՝ «Արփի լիճ» ազգային պարկը, գտնվում է հայցվող տեղամասից ավելի քան 48կմ հեռավորության վրա:

Արթիկի տուֆերի հանքավայրի և դրա տեղամասերի տարածքում երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքները սկսվել են դեռևս անցյալ դարի 50-ական թվականներին և ակտիվորեն շարունակվում են մինչ օրս: Տուֆերի արդյունահանման արդյունքում ձևավորված տեխնածին լանդշաֆտը բացառում է տարածքում Կարմիր գրքերում գրանցված բույսերի աճելավայրերի կամ կենդանիների բնադրավայրերի առկայությունը:

Արթիկի տուֆերի հանքավայրի տարածաշրջանում հայտնի են բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- թրաշուշան Ջավախքի – վտանգված տեսակ է, աճելավայրերից մեկը գտնվում է Մեծ Մանթաշ գյուղի մոտ, հայցվող տարածքից 12կմ հյուսիս-արևելք,
- լերդախոտ ալեհեր – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, աճելավայրերը հայտնի են Արթիկ (տեղամասից 5,8կմ հյուսիս-հյուսիս-արևելք) և Պեմգաշեն (տեղամասից 2,6կմ հարավ-հարավ-արևմուտք) բնակավայրերի մոտ,
- տուտղավարդ Ղարսի – վտանգված տեսակ է, աճելավայրերից մեկը գտնվում է Հոռոմ գյուղի մոտ՝ հայցվող տեղամասից 6,4կմ հյուսիս-հյուսիս-արևմուտք,
- Տուտղավարդ Սոֆիի - վտանգված տեսակ է, աճելավայրերից մեկը գտնվում է Մարալիկ բնակավայրի մոտ՝ հայցվող տեղամասից 6,7կմ հարավ-հարավ-արևմուտք:

Արթիկի տուֆերի հանքավայրի տարածաշրջանում հայտնի են կենդանիների կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- մորեխ հայկական – սահմանափակ, ընդհատվող արեալով տեսակ է, ապրելավայրերից մեկը հայտնի է Արթիկ քաղաքի շրջանում՝ տեղամասից 5,8կմ հյուսիս-հյուսիս-արևելք,

- փոքր ասիական գետնասկյուռ և Շիդլովսկու դաշտամուկ – վտանգված տեսակներ, բնադրում է Շիրակի դաշտավայրի լեռնային խոպան տափաստաններում, որոնք տեղամասի տարածքում բացակայում են:

Արդյունահանման աշխատանքների ընթացքում շահագործվելու են արդեն գոյություն ունեցող ենթակառուցվածքները, հետևաբար լրացուցիչ ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն:

3. ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- *Ենթակառուցվածքներ*

ՀՀ Շիրակի մարզը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Պետական սահմանով արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հյուսիսից՝ Վրաստանին, արևելքից սահմանակից է՝ ՀՀ Լոռու մարզին և հարավից՝ ՀՀ Արագածոտնի մարզին: Տարածքը՝ 2681 քառ կմ է, Հայաստանի Հանրապետության ընդհանուր տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը 9% է: Մարզն ունի 131 բնակավայրեր, այդ թվում 3 քաղաքային և 128 գյուղական: Քաղաքային համայնքների թիվը 3-ն է, գյուղական համայնքների թիվը՝ 116: Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2011թ. մարդահամարի տվյալներով կազմել է 8.4%:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը /2013թ հունվարի 1-ի դրությամբ/ կազմում են 214 548 հա, այդ թվում վարելահողերը՝ 78 941 հա, խոտհարկները՝ 10 499, արոտները՝ 114 348: Մարզը լինելով ծովի մակերևույթից մոտ 1500-2000 մ բարձրության վրա /մարզի 52 գյուղեր գտնվում են ծովի մակերևույթից մոտ 1500-1700մ, իսկ 55-ը՝ 2000մ բարձրության վրա/, հանդիսանում է Հայաստանի ամենացրտաշունչ տարածաշրջանը, որտեղ ձմռանը օդի ջերմաստիճանը երբեմն հասնում է - 46 աստիճանի:

Մարզի տարածքով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող գլխավոր երկաթգիծը և ավտոմոբիլային խճուղին:

Թուրքիայի հետ սահմանային Ախուրյան գետի վրա գործում է Ախուրյանի ջրամբարը, որն իր 526 մլն խոր մետր ծավալով խոշորագույնն է հանրապետությունում:

ՀՀ Շիրակի մարզի արդյունաբերության առաջատար ճյուղերն են՝ մշակող արդյունաբերությունը, այդ թվում սննդամթերքի և մանածագործական արդյունաբերությունը, ընդերքօգտագործման ոլորտն ու բաց հանքերի շահագործումը: Հայտնի են Արթիկի և Անիի տուֆն ու պեմզան: 2012 թվականին մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի մոտ 60.0%-ը բաժին է ընկել Գյումրի քաղաքին, հանրապետությունում թողարկված տրիկոտաժեղենի և գուլպա-

նասկեղենի զգալի մասը արտադրվել է քաղաքի թեթև արդյունաբերության ոլորտի ընկերությունների կողմից:

ՀՀ Շիրակի մարզում արտադրանք են թողարկում շուրջ 100 տնտեսավարող սուբյեկտներ: Արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր և փոքր ընկերությունները, որոնց տեսակարար կշիռը կազմում է մոտ 76%:

Բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվել է մարզում գործող մոտ 920 առևտրի օբյեկտների միջոցով: Մարզում գործող մոտ 360 օբյեկտների միջոցով բնակչությանը ընթացիկ գներով մատուցվել են 18 մլրդ 492 մլն դրամի ծառայություններ: Մանրածախ առևտրի շրջանառության մոտ 83.0% և մատուցված ծառայությունների 85.0% ապահովել են Գյումրի քաղաքի կազմակերպությունները:

Ներկայումս ՀՀ Շիրակին մարզում գործում են 46 նախակրթարաններ, որտեղ հաճախում են 4332 երեխաներ: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգկված երեխաների թիվը չի գերազանցում նախադպրոցական տարիքի երեխաների թվի 35%-ը:

ՀՀ Շիրակի մարզպետարանի իրավասության ներքո գործում են 153 պետական ուսումնական հաստատություններ, որոնցից 150-ը հանրակրթական, 2-ը՝ հատուկ կրթության, 1-ը՝ երեկոյան: Դպրոցներից 1-ը ունի վարժարանի կարգավիճակ: Մարզում գործում են նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության 13 ավագ դպրոցներ, 1 վարժարան, ԳՊՄԻ և ՀՊՃՀ-ի հենակետային ավագ դպրոցները, ՀՊՏՀ-ի հենակետային վարժարանը: Կազմակերպվում է նախադպրոցական կրթական, հանրակրթական, հատուկ կրթական, երեկոյան դպրոցում հանրակրթական, ներառական կրթության ծառայությունների մատուցում:

Պետական հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 26236 աշակերտ: Դպրոցների և աշակերտների թիվը կազմում է հանրապետությունում գործող դպրոցների և աշակերտների թվի մոտ 10%-ը: Դպրոցներից 55-ը /32%-ը/ գործում են մարզի 3 քաղաքներում, 115-ը /68%-ը/ 112 գյուղերում: Քաղաքային դպրոցներում

սովորում են շուրջ 17528 աշակերտներ /աշակերտների ընդհանուր թվի 56.6%-ը/: Հանրակրթական դպրոցներից 30-ը գործում են բարձր լեռնային, 44-ը՝ լեռնային, 13-ը՝ սահմանամերձ բնակավայրերում: Երկու հատուկ դպրոցները իրականացնում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար նախատեսված կրթական ծրագրեր: Այդ դպրոցներում ընդգրկված են 135 երեխաներ: Ոչ պետական 4 հանրակրթական դպրոցներում սովորում են շուրջ 475 երեխաներ:

ՀՀ Շիրակի մարզի մշակույթի ոլորտում գործող մշակութային կազմակերպությունների ընդհանուր պատկերը ներկայացվում է աղյուսակում:

Ոլորտ	Տարածաշրջաններ						
	Գյումրի	Ախուրյան	Աշոցք	Ամասիա	Անի	Արթիկ	Ընդամենը
Թանգարաններ	6	1	-	-	-	-	7
Գրադարաններ	7	31	22	15	17	23	97
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, քոլեջներ	13	6	1	1	2	6	29
Նվագախմբեր	3	-	-	-	-	-	3
Մշակույթի տներ, ակումբներ	1	15	3	5	9	14	47
Երգչախմբեր	8	2	-	1	1	1	13
Դրամատիկական թատրոն	1	-	-	-	-	-	1
Տիկնիկային թատրոն	1	-	-	-	-	-	1
Կինոթատրոն	1	-	-	-	-	-	1
Գեղարվեստի ԲՈՒՀ-երի մասնաճյուղեր	3	-	-	-	-	-	3

Ներկայումս մարզի 119 համայնքներից ընդամենը 15-ում են գործում թվով 27 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, որոնցում սովորում են մոտ 3500 երեխաներ: Մեկ արվեստի դպրոց գործում է ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայության ներքո, մեկ գեղագիտական կենտրոն՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության ներքո, մասնավոր

հիմունքներով մարզում գործում են երկու արվեստի դպրոցներ, մնացած երաժշտական և արվեստի դպրոցները հիմնականում համայնքային ենթակայության են.

	Գյումրի	Արթիկ	Անի	Ախուրյան	Աշոցք	Ամասիա
Երաժշտական պրոցների թիվը	11	8	1	5	1	1

Մարզում գործում են 7 թանգարաններ. Մինաս Ավետիսյանի թանգարան, /Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղ/ Գյումրու ժողովրդական ճարտապետության և քաղաքային կենցաղի թանգարան, /Ս. Մերկուրովի տուն-թանգարան մասնաճյուղով/, Շիրակի երկրագիտական թանգարան, Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան, Մհեր Մկրտչյանի թանգարան, Մարիամ և Երանուհի Ապամազյան քույրերի պատկերասրահ:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Հայցվող տարածքը գտնվում է Տուֆաշեն համայնքի հողերում:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմում է 420 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 216 և կանայք՝ 204:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 1173.84 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 995.85 հա, բնակավայրերի հողերը՝ 72.50 հա, արտադրական նշանակության հողերը՝ 127.72 հա, էներգետիկայի, տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողերը՝ 5.61 հա, հատուկ պահպանության հողերը՝ 12.16 հա:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ: Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ:

Արթիկի տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասի «Ֆիրմա Կոունկ» ՍՊԸ ընդլայնվող բացահանքից օգտակար հանածոների արդյունահանման ծրագիրը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող

աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը, ինչպես նաև համայնքին սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրերը:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Տուֆաշեն համայնքի տարածքում նշված են հետևյալ հուշարձանները.

Հուշարձանը	Ժամանակը	Գտնվելու վայրը
Գերեզմանոց	18-20դդ.	Գյուղի արևմտյան եզրին
Դամբարանադաշտ	Ք.ա. 3-2 հազ.	Գյուղի հյուսիսային մասում
Հուշարձան Երկրորդ Աշխարհամարտում Չոհվածներին	1987թ.	Գյուղի արևելյան եզրին, բլրի վրա
Մատուռ Սուրբ Մինաս	17դ. վերջ	Գյուղից 0.5կմ հյուսիս-արևելք

Հանքավայրը գտնվում է նշված հուշարձաններից 700-1864մ հեռավորությունների վրա և դրա շահագործման արդյունքում հուշարձանների վրա բացասական ազդեցությունը բացառվում է:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արթիկի հրաբխային տուֆերի հանքավայրի Հարավային տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի իրականացման ընթացքում ոչ նշանակալից տեխնածին ճնշումներ են դրսևորվելու հիմնականում մթնոլորտի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Բացահանքում աշխատող ավտոտրանսպորտը դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև բացահանքի սահմաններում՝ կապված տուֆի արդյունահանման տեխնոլոգիական պրոցեսի հետ:

Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասի տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան.

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողային ծածկույթ.

Հողային ծածկույթի խախտում լինելու է նվազագույն, քանի որ տեղամասը շահագործվում է դեռևս ԽՍՀՄ տարիներից: Համապատասխան ենթակառուցվածքները առկա են: Շահագործման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել բացահանքի տարածքի լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա:

Բուսական և կենդանական աշխարհ.

Հրաբխային տուֆերի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է, քանի որ տեղամասը շահագործվում է դեռևս ԽՍՀՄ տարիներից, նոր տարածքների խախտում և, հետևաբար, բնական համակարգերի վրա նոր տեխնածին ճնշումների դրսևորում չի նախատեսվում:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Մոտեցնող ճանապարհների անցում	Բացահանքի անցում	Արդյունահանման աշխատանքներ
Մթնոլորտային օդ	ցածր երկարատև	ցածր երկարատև	ցածր երկարատև
Ջրեր	-	-	-
Հողեր	ցածր երկարատև	ցածր երկարատև	ցածր երկարատև
Կենսաբազմա- զանություն	աննշան	աննշան	աննշան
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-

**5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որի տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար :
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն :
- Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր :
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, հանքախորշ, լցակույտ, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին :
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :
- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա :
- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում:
- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- «ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Հարավային տեղամասի ընդլայնվող բացահանքի շահագործման ընթացքում «Ֆիրմա Կռունկ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մգ/մ³, ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մգ/մ³, մրի համար՝ 0,15մգ/մ³:

2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:


3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 10-ում:

«Ֆիրմա Կռունկ» ՍՊԸ-ի կողմից Հարավային տեղամասի ընդլայնվող բացահանքի տարածքում կնախատեսվի համապատասխան հաղորդակցման համակարգ (ինֆորմացիոն և շարժակալ կապ), որով հնարավոր է արտակարգ

իրավիճակների ժամանակ կապ հաստատել ձեռնարկության վարչական կազմի, տեղական ինքնակառավարման մարմինների, շտապ օգնության հետ:



Նկար 10.

Գրականություն

1. «Հայաստանի հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի տվյալներ, 2016թ.
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ,
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայք